ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4

26.06.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1 գնման պայմանագրի

ք. Երևան 17.06.2020թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Գազկոմշին>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Մ. Միսակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր)՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 07.05.2020թ. N 709-Ն որոշումը և Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 26.06.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 5.1.1 կետում ավելացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

<<Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված աշխատանքների դիմաց 2020թ. համար վճարման ենթակա գումարը կազմում է **171 368 800 (մեկ հարյուր յոթանասունմեկ միլիոն երեք հարյուր վաթսունութ հազար ութ հարյուր)** ՀՀ դրամ, որից 28 561 467 (քսանութ միլիոն հինգ հարյուր վաթսունմեկ հազար չորս հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն>>:

1.1.2 Պայմանագրի N 2 հավելվածը լրացնել նոր օրացուցային գրաֆիկով՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

1.1.3 Պայմանագրի N 3 հավելվածը լրացնել նոր վճարման ժամանակացույցով՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 2-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:Համաձայնագրի հավելված N 1-ը բաղկացած 1 (մեկ) էջից և հավելված N 2-ը բաղկացած 1 (մեկ) էջից համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Գազկոմշին>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Նոր-Նորքի 9-րդ զանգված, 20/53
կառավարական տուն 3	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 11500905218000
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00843968
Հ/Հ 900011012698	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Մ. Միսակյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
26.06.2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1 գնման պայմանագրի
17.06.2020թ. կնքված N 4 համաձայնագրի

<<ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման 2020թ. հատկացված գումարների շրջանակներում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ

ըստ աշխատանքների ծավալների

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների նվազագույն ծավալը (արտահայտված ՀՀ դրամով)	Աշխատանքների կատարման համար նախատեսված օրացուցային օրերի քանակը
1	171 368 800	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից 214 օրացուցային օր

ըստ առանձին աշխատանքների տեսակների

N ը/կ	Կատարվելիք աշխատանքների անվանումը	Կատարված աշխատանքների ներկայացման ժամկետը
1	Տեխնոլոգիական աշխատանքներ, սանիտարական սարքեր, հակահրդեհային և տեսահսկման համակարգեր, տարածքի բարեկարգում, վերելակի մոնտաժում, ջեռուցում, ջրամատակարարման բակային ցանց, ոռոգման բակային ցանց, անձրևաջրերի հեռացման համակարգ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից 214 օրացուցային օրվա ընթացքում

*** Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությունը նախօրոք անհրաժեշտ է համաձայնեցնել Պատվիրատուի հետ:>>**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012698
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Լ. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Գազկոմշին>> ՍՊԸ
ք. Երևան, Նոր-Նորքի 9-րդ զանգված, 20/53
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500905218000
ՀՎՀՀ 00843968

Տնօրեն՝

_____ Մ. Միսակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
26.06.2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1 գնման պայմանագրի
17.06.2020թ. կնքված N 4 համաձայնագրի

<<ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց՝ վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45211131/1	Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	-	171 368 800	171 368 800	171 368 800	171 368 800

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:>>*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012698
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Գազկոմշին>> ՍՊԸ
ք. Երևան, Նոր-Նորքի 9-րդ զանգված, 20/53
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500905218000
ՀՎՀՀ 00843968

Տնօրեն՝

_____ Մ. Միսակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 9
«ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1» ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «15» 06 2020թ.

„Գազկոմշին,,ՍՊԸ ի դեմս Ընկերության տնօրեն Մաքսիմ Թեմուրի Միսակյանի ,անձAM0661342,տրված 005 կողմից,02.03.2012թ որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1.Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

''Գազկոմշին,,ՍՊԸ
ընկերության անվանումը

Ք. Երևան,Նոր նորք 9-րդ զանգ, 20/53
ընկերության հասցեն

,, Հայբիզնեսբանկ,, ՓԲԸ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

hh 11500905218000
ընկերության բանկային հաշվեհամարը

ՀՎՀՀ 00843968
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Մաքսիմ Միսակյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**[1]

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝,, Գազկոմշին,, ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ,, Հայբիզնեսբանկ,,ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ 11500905218000

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 00843968

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565827

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900005000758

14.Գումարը (թվերով և բառերով)՝42587120/քառասուն երկու միլիոն հինգ հարյուր ութսունյոթ հազար հարյուր քսան/դրամ

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ Հայաստանի Հանրապետության դրամ, ՀՀ դրամ, AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ Մ.Միսակյան /_____/ /_____/
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/
24.բ. Կ.Տ.	23.բ. Կ.Տ.
24.գ "___" ___ 20___ թ.	23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

N 3422-02

«12» 06 2020

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի** (այսուհետ՝ բենեֆիցիար) և **«ԳԱԶԿՈՄՇԻՆ» ՍՊԸ** (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքված N **ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-19/1 պայմանագրի թիվ 4 համաձայնագրից** բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահով:

2. Երաշխիքով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **17,137,000 /տասնյոթ միլիոն մեկ հարյուր երեսունյոթ հազար/ ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքված N ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-19/1 պայմանագրի թիվ 4 համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պրիցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, կամ առավելագույնը՝ մինչև **25.01.2021թ.**:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-19/1 պայմանագրի թիվ 4 համաձայնագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) սույն երաշխիքը.

4) երաշխավորված պարտավորությունների խախտման հիմնավորումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահի տեղակալ՝ **Ն. Գրիգորյան**

Գլխավոր հաշվապահ **Ն. Սարգսյան**